եաց աւերութենէ» փախստական են դառնում, նա կը կամենար, «որ ամէն գիր ոսկի էր լել (s!), ապա մեր կարողութիս. այդ չափ էր»։ Ցետոյ ստացուած է «յիշատակ աղախնոյն ՅՍ այսուդա կոչեցեալ», «որ տղա և տհաս հասակաւ փոխեցաւ առ Քս.»։ Ո՞րտեղ է Նոնաւնից վանքը, ուր Եսային իշխանութիւն ունէր հրամայելու, չգիտենք հաստատ. Նոնաւնից Ս. Աստուածածին էր կոչւում Ածոպի Խոտակերաց Ս. Աստուածածինը, Պոռշեանց վանքերից, որի պատ-

տենագրութեան մէջ իւր Պատարագի մեկնութեամբ, քաղուածք Խոսրով Անձևացու և Ներսէս Լամբրոնացու նման աշխատութիւններից(*), իսկ Մխիթար վարդապետը Սասնեցին է, Կերմանեցի ևս կոչուած, Մեծոփայ վանքի նշանաւոր վարժապետներից մէկը եւ մեր մատենագրութեան մէջ յայտնի իւր երկերով(**)։ Նա Գայլեձոր է եկել 1281 թուին, որին հետևել են ապա Ստեփանոս և այս Յովհաննէս ուսուցիչները, կամ «հոգւոյ հարազատ»ները, սկզբում աշակերտե-



Պատկեր 204.

մութիւնն ու նկարագրութիւնը տուինք։ Բայց նոյն ձեռագրի մի ուրիշ յիշատակարան 330ա. պարզում է Յովհաննէս վարդապետի անձնաւորութիւնը և թէ ձեռագրի մի մասի գրութեան տեղը. «Գրեցաւ վերլուծութիս. Դանիէլի մգէի. յանապատիս Գայլեձոր անուանելոյ, ի թուի ՉԾԲ երորդի, աւժանդակութեամբ. մերոյս սրբազան և արդիւնական ըաբունապետի Եսայիաս անուն առձայնելոյ, ի ստացումն և ի խնդրոյ պատուական և աստուածահաճոյ Յոհ. վարժապետի և իմոյ հոգւոյ հարազատի. ձեռամբ անպիտան և անարժան Մխ. պիտակ անուն վպի.» (Յաւել. Բ. 77, պատկ. 206)։ Այստեղ յիշուած Յովհաննէս վարժապետը Արճիշեցին է կամ Ոսպնակերը, որ յայտնի է մեր մա-

լով Ներսեսին, իսկ սորա մահուանից յետոյ Նչեցուն։ Նոքա Գլաձորումն էին դեռ ևս 1291 թուին «առ վարդապետին մերոյ ընտրելոյ . . . որոյ անուն Եսայիաս առձայնիւր»(***)։ Այդ թուականից յետոյ նա կարճ ժամանակով վերադարձել է հայրենիք, բայց կրկին եւ ևս մեկ անգամ Գլաձորում վարդապետական աստիճան ստա-

(*) Մեկնութիւն Ահաւոր Խորհրդոյ Սրբոյ Պատարագին. Յովհաննու վարդապետի Արճիշեցւոյ. Էջմիածին. 1860։ Առաջին տպագրութիւնը Պոլսում 1779 թուին, իսկ երկրորդը Կալկաթայում 1830 թ.։

(**) Մեր «Մխիթար Սասնեցի կամ Կերմանեցի». Արարատ. 1889. 167։ Նաև առանձին գրքոյկով։

(***) Անդ. 161։